



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԴԱՏԱՒՈՐ ՍԱՍՈՒԷԼ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 15 Յուլիսի առաւօտուն, Ազգ. առաջնորդարանին մէջ ընդունեց Միացեալ Նահանգներու Դաշնակցային Դատաւոր Սամուէլ Տեր Եղիայեանի այցելութիւնը: Դատաւոր Տեր Եղիայեան կարճատեւ այցելութեան մը համար Լոս Անճելըս կը գտնուի: Անոր կ'ընկերանար եղբայրը՝ »Մաշտոց« Զուլեճի տնօրէն Տոքթ. Կարպիս Տեր Եղիայեան:

Հանդիպումին, խորհրդակցութեան սիւթ եղան այժմեական հարցեր, որոնք ընդհանրապէս աղերս ունին հիւր դատաւորին ասպարեզին հետ: Առաջնորդ Սրբազանը այս առիթով գոհունակութիւն արտայայտեց, որ Դատաւոր Տեր Եղիայեան մէկն էր այն քառասուն անձերէն, որոնք յատուկ պատիւի արժանացած էին «Նիւ Եորք Թայմզ»ին կողմէ, 4 Յուլիսին, անկախութեան տօնին առիթով հրատարակուած յօդուածի մը մէջ, անձնաւորութիւններ՝ որոնք Միացեալ Նահանգներ ներգաղթելով, հասած են պատուաւոր դիրքերու:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց յարգելի հիւրին:

JUDGE SAMUEL DER-YEGHIAYAN VISITS THE PRELACY

On the morning of Wednesday, July 15th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the visit of United States District Judge the Honorable Samuel Der-Yeghiayan to the Prelacy. Judge Der-Yeghiayan was accompanied by his brother and Mashdots College president Dr. Garbis Der-Yeghiayan.

The Prelate and guests discussed a number of issues and on this occasion the Prelate congratulated Judge Der-Yeghiayan on being one of forty individuals recently honored by the New York Times in an article written on immigrants who have achieved great success in the United States.

At the conclusion of their meeting the Prelate presented Judge Der-Yeghiayan with a memento.